

## ՄԵՐ ՈՒԺԻՑ ՎԵՐ<sup>1)</sup>

Դրամա երկու գործողութեամբ

Բէօրնստէյընէ Բեօրնսօնի

## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾ-ՌԴՈՒԹԻՒՆ

Մի փոքրիկ սենեակ, գերաններից շինուած պատերով.  
Քեմի խորքում դուռ, որ միշտ բաց է և տանում է դէպի  
փոքրիկ նախագաւիթը, որտեղ մի անկիւնից երևում է մերկ  
ժայռերով շրջապատուած բնութեան մի տեսարան։ Զախ կող-  
մբ մի մեծ պատուհան։ աջ կողմը՝ դուռ։ Դէպի նախադաւիթը  
տանող դրան վրայ կախուած է ոսկէզօծ խաչ, խաչեալ Քըիս-  
տոսով՝ ապակու տակ, Բաւականին դէպի ձախ՝ մի բազմոց, ա-  
ռաջը սեղան, որի վրայ դարսած են մի քանի գրքեր։ Պատե-  
րի մօտ շարուած են աթոռներ։

## Ա.ՌԱԶԻՆ ՏԵՍԻԼ

Ելիասը շտապով և անհանգիստ նախագաւիթից ներս է  
մտնում. հագին կտաւէ շապիկ և թեթև ոտնամաններ։ Սովո-  
րաբար շապկանց և առանց գլխարկի։ Նա լուռ կանգնած է,  
ապա մօտենում է պատուհանին և ականջ դնում։ Հեռուից, բայց  
պարզ լսում է աղամարդկանց ձայն, որոնք եկեղեցական երգ  
են երգում։ Ելիասը շատ յուզուած է։

Ռահիլը յեղարած աջ դռնից կամաց ներս է մտնում և  
նորից ծածկում դուռը։ Նղբայրը նորան նշան է անում, որ որ-  
քան կարելի է հանդարտ կանգնի և լսի։

Ռահիլ. (Նոյնպէս յուզուած. կամաց ասում է). Թող  
մայրիկի սենեակի դուռը բանամ։

1) Տես «Լումայ» № 3.

**Էլիաս.** Միթէ մայրիկն արդէն զարթել է:

**Ռահիլ.** Ո՞չ, բայց նա ականջ է դնում հայրիկին. (Ռահիլն աջ կողմից դուրս է գնում, կրկին հանդարտ ներս մտնում, դուռը յետելից բաց թողնելով եւ յետոյ կամաց ասում). Նա ծիծաղում էր:

**Էլիաս.** (Նոյնպէս կամաց). Աշխ Ռահիլ,

**Ռահիլ.** (Կուզեռմ է) Էլիաս, —մի խօսիր, — տանել չեմ կարող:

**Էլիաս.** Ռահիլ, մի դմւրս նայիր—դորանից գեղեցիկ բան կարող է լինել: Հարիւրաւոր մարդիկ սուս ու փուս եկեղեցու շուրջն հաւաքուած. իսկ նա ներսում երգում, աղօթում է, առանց տեղեակ լինելու, որ զրսից մէկը ականջ է դնում: Թէս պէտ լուսամուտը բաց է, բայց նա չի կարող տեսնել, որովհետեւ պատուհանը շատ բարձր է: Որպէս զի նորան շմանգարեն, մարդիկ մեռելային լուսութիւն են պահում:

Տես, Ռահիլ, նա խօսում էր աղօթքէ շղթայի մասին. այսուոր մարդիկ որ եկեղեցին շրջապատեն—աղօթքէ շղթան հենց այդ է:

**Ռահիլ.** Այս. (Երկուան էլ ականջ են դնում երգին, բայց երգը շուտով դադարում է). Այսօր նա յաճախ է երգում:

**Էլիաս.** Դոները փակիր, ես քեզ շատ բան ունիմ պատմելու: Արդէն երկու անդամ այստեղ եմ եղել և քեզ էլ փնտրում:

**Ռահիլ.** (Կամաց դուրս է գնում աջ կողմից, նորից վերադառնում եւ ետելից դուռը ծածկում. յետոյ բարձր ծայնով ասում). Այսօր նորից շատ մարդիկ են եկել ճաշից յետոյ:

**Էլիաս.** Եւ դեռ շարումնակ գալիս են—հեռու մղոնաւոր տեղերից. նոցա բոլորին դու չես կարող տեսնել. որովհետեւ մեծ մասը հեռու ծառերի տակ են գտնւում և այնտեղ իրանց ժողովրդական քարոզչին են լսում: Նորա այնտեղ հայրիկին չեն խանգարիլ: Գնում-գալիս են ծառերից դէպի եկեղեցին և ծառից ծառ:—Բայց հապա նայիր այնտեղ՝ ծովի ափին:

**Ռահիլ.** Այդ ինչ է. ափը մարդկանցով բոլը ուին սկացել է. այդ ինչ է նշանակում:

**Էլիաս.** Քարոզչական նաւ է եկել:

**Ռահիլ.** Քարոզչական նամաւ:

Էլիաս. Միթէ չգիտես, որ հեռու արևելքում ապրողներ նաւ են վարձել եկել, որ քաղաքում տեղի ունենալիք քարոզական ժողովին ներկայ լինեն։ Այժմ նաւը ֆիորդումն է։

Ռահիլ. Այստեղ։

Էլիաս. Այն, այստեղ։

Ռահիլ. Բայց ինչո՞ւ այստեղ են եկել։

Էլիաս. Որպէս զի հրաշքը տեսնեն, Նըր մեր ներկայացուցիչները՝ պաստօր Կրօյէրն և մի ուրիշը—ափից նոցա համախմբած նաւն էին հասել։

Ռահիլ. Յետո՞յ։

Էլիաս. Նև տեղեկացրել էին, ինչ որ երէկ այստեղ տեղի ունեցաւ, մանաւանդ այն, որ հայրիկն այդ ժամանակ մենակ է եղել եկեղեցում և աղօթելիս...

Ռահիլ. Հիմա հասկանում եմ։

Էլիաս. Այն ժամանակ նոցանից և ոչ մէկը չէ կամեցել ժամապարհը շարունակել, այլ ուղղակի ցանկացել են այստեղ գալ Սպիսկոպոսն և պաստօրները խօսք էին տուել, որ յետոյ կգան, բայց նոքա լսել անգամ չեն կամեցել. այլ ուղղակի այստեղ գալ էին կամեցել։ Նև եպիսկոպոսն ու պաստօրները ստիպուած զիջել էին։ այժմ արդէն այստեղ են։

Ռահիլ. Հոգեորականներն էլ։

Էլիաս. Ի հարկէ. եպիսկոպոսը և իւր պաստօրները։

Ռահիլ. Նոքա մեր տուն չեն գալ, Լաւ կլինէր որ մի այլ շոր հագնէիր։

Էլիաս. Բայց այլ շորերի մէջ չեմ կարող դիմանալ։

Ռահիլ. Չես կարող դիմանալ։

Էլիաս. Նոքա ինձ այրում են. և բացի դորանից ինձ տիրում է մի այնպիսի զգացում, կարծես թէ օդը պէտք է թըռչեմ։ Խօսքերով չեմ կարող նկարագրել քեզ այդ։

Ռահիլ. Բայց, ելիաս։

Էլիաս. Ահա նա գնում է այնտեղ։

Ռահիլ. Ո՞վ, ում մասին ես տսում։

Էլիաս. Տես, միթէ նա չէ. նա ինքն է։ Նորան այս առաւօտ հիւանդ բերին այստեղ. ախ, ինչպէս հիւանդ և այժմ իւր ուրքով է գնում, տեսնում ես, այ այնտեղ։

Այսօր, երբ հայրիկն առաջին անգամ երգել սկսեց, ոչ ոք չէր սպասում, որ երգելու է. և այս այնպէս մեր որտով էր, որ սկսեցինք լաց լինել։ Այդ ժամանակ հիւանդն առանց

ուրիշի օգնութեան կանգնեց, և մենք չնկատեցինք, մինչեւ որ  
նա մեր մէջ լընել սկսեց:

Մայրիկն էլ այդպէս ոտքի է կանգնելու, Ռահիլ. ես աբ-  
դէն աշխիս առաջ նորան տեսնում եմ:

Ռահիլ. Նա, վեր կենայ. թէպէտ ամեն բողէ սպա-  
սում եմ դորան, բայց սարսափից դողում եմ:

Ելիաս, դու նայում ես ինձ:

Ելիաս. Այս, շատ անգամ, երբ դու կամ ուրիշները խօ-  
սում էք, ինձ թում է թէ մի անբաղդութիւն՝ է տեղի ու-  
նենում:

Ռահիլ. Ինչու, Ելիաս,

Ելիաս. Երբեմն էլ — ինչպէս հենց այժմ — լսում եմ միայն  
հնչիւն, ձայն, բայց միտքը չեմ հասկանում, որովհետեւ միաժա-  
մանակ մի բան եմ լսում, որ չի ասուիր:

Ռահիլ. Զի ասուիր:

Ելիաս. Ցածախ պատահում է, որ իրը հայրիկն ինձ կան-  
չում է — ուղղակի անունս է տալիս, ինչպէս երեկ առաւօտեան  
նա դիտմամբ՝ է այս անունը ինձ տուել, որ մի տեսակ հըն-  
չում է և մեղադրում ինձ — մի և իւր ձայնով. . . .

Լինում են ժամանակներ, երբ այդ ձայնն ինձ ամեն կող-  
մից հետևում է և մեղադրում. երբեմն էլ զգում եմ ինձ աւե-  
լի մեծ լուսնպի մէջ ձգելու մի ձգտում. թէպէտ գիտեմ, որ այդ  
վտանգից անվնաս եմ դուրս գալու: Զէ, մի վախենար, այդ-  
պիսի բան չկայ:

Ռահիլ. Ելիաս, արի իրար հետ ներս գնանք մայրիկի  
մօտ նստենք, օրտեղ խաղաղութիւն է տիրում:

Ելիաս. Զեմ կարող — : Ռահիլ, պատասխանիր ինձ Աս-  
տուծոյ առաջ. աւագ բեր քո զտած կասկածները և պատա-  
խանիր ինձ. արդեօք հրաշք չէր, ինչ որ մենք տեսանք:

Ռահիլ. Ա' ի Աստուծ իմ, Ելիաս — ինչու միշտ նոյնն ես  
կրկնում:

Ելիաս. Բայց մի՞թէ սարսափիլի չէ, որ միակ կասկածողնե-  
րը հենց նորա որդիքը պէտք է լինեն.

Ռահիլ. Ելիաս, բաւական է, խնդրում եմ:

Ելիաս. Ասա ինձ միայն, ինչ որ խսկապէս հաւատում  
ա. քարէ կոյտերի այդ հեղեղները գիտես որ չի կարելի որպէս  
հասարակ գիպուած համարել. ճիշտ չեմ ասում. նոյնպէս և  
մայրիկի քնելը — հենց այն ժամանակ, երբ նա զանգաւարել սկը-

սեց չնայելով այն աղաղակներին—քնած էր մինչև որ նա աղօթում էր. Միթէ այս հրաշք չէ. և ինչու միւս բաներն էլ հրաշք չը պէտք է համարել. այն էլ մեծ հրաշք:

Ռահիլ. Ելիմա, ես համարեա հաւատում եմ.

Էլիաս. Հաւատում ես:

Ռահիլ. Բայց և այնպէս բաւականին վախում:

Էլիաս. Վախսենում, երբ դա հրաշք է: Ուրեմն չես հաւատում, որ հրաշք է:

Ռահիլ. Այն:

Էլիաս. Չէ որ դա որպէս հասարակ մագնի սական բժշկող կամ լոկ անձնական ոյժ չի կարող լինել: Ո՞չ, աւելին է. միթէ հրաշք չէ: Զգում ես այդ:

Ռահիլ. Ես չեմ կարող նորից լիշել այն: Որպէս զի հանգիստ լինեմ, գնում եմ մայրիկի մօտ. նորա անարատութիւնն և ազնութիւնը լցնում է ամրող սենեակը և այդ աեսակ խնդիրներ ցիր ու ցան անում:

Այժմ խնդիրն այդ չէ, այլ ինչ որ մի ուրիշ բան:

Էլիաս. Ուրիշ բան:

Ռահիլ. Այն, ինչ կլինի եթէ նա վեր է կացեր չէ որ դորանով բանը չի վերջանար. Վերջապէս...

Էլիաս. Վերջապէս ինչ...

Ռահիլ. Այն, որ այստեղ մայրիկի կեանքի խնդիրն է (լաց է լինում):

Էլիաս. Թահիլ, Աստուած իմ:

Ռահիլ. Մայրիկն այլ ևս ոյժ չունի դիմանալու. իսկ հայրիկն առանց տատանման պէտք է շարունակէ իւր դործը մանաւանդ այժմ:

Էլիաս. Ի՞նչպէս:

Ռահիլ. Ինչպէս ինքը կկամենայ:

Էլիաս. Եթէ այդ իսկապէս հրաշք է, ինչու պէտք է վախենալ, Ռահիլ:

Ռահիլ. Ես չեմ կարողանում նախատեսել այն հետեանքը, որ տեղի կունենայ հայրիկի, մայրիկի և մեր բոլորիս վերաբերմամբ:

Ա՛խ, դու ինձ բոլորսին չես հասկանում:

Էլիաս. Ո՞չ:

Ռահիլ. Ինձ թում է, որ միւնոյն է ինչպէս և լինի սամեզ ոչնչացնում է, մեզ գլխավեր է անում:

**Էլիաս.** Հրամաքը:

**Ուահիլ.** Ի հարկէ. սա շնորհ չէ. այլ մի անտանելի բան։ Ա՛յ եկաս. (Ուահիլը նորան դէպի սենեակը խորքն է տանում):

**Էլիաս.** Ի՞նչ կայ:

**Ուահիլ.** Այնտեղ պատուհանի մօտ մի մարդ է կանգնած և ուղղակի ներս է նայում—մի տարօրինակ մարդ—խիստ գունատուած։

**Էլիաս.** Վերնազգեստի կոճակները վերկից մինչև ներքեծքած։

**Ուահիլ.** Այս. (Կամաց ճիշ արձակելով) Նա արդէն սենեկումն է. (Ուահիլը յետ յետ է զնում, կարծես թէ մի երեւոյթից վախճնում է եւ իսկոյն մօր սենեակը մտնում)։

**Էլիաս.** Սենեկումն է, այստեղ. (մէկ անժանօթ զալիս է նախազաւթի ծախ կողմից, ոտքը շէմքին դնում, հանդարտ կանգնում եւ շուրջը նայում)։

### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼ

**Էլիաս.** (Նայելով անծանօթին). Ահա և նա,

**Անծանօթ.** (Բրատոտ). Թոյլ կտաք։

**Էլիաս.** Ո՞վ էք դուք։

**Անծանօթ.** Մի՛թէ ձեզ համար միւնոյն չէ։

**Էլիաս.** Նս ձեզ դեռ երեկ տեսել եմ այստեղ։

**Անծանօթ.** Կարող է պատահել։ Նս սարերուն եմ եկել այստեղ։

**Էլիաս.** Սարերով։

**Անծանօթ.** Ուղղակի վերեն էի կանգնած, երբ հեղեղը ցած էր թափւում։

**Էլիաս.** Ճի՞շ։

**Անծանօթ.** Եւ լսում էի զանդակի հայնը։ Եւ այսօր էլ տեսայ այն հիւանդին, որ ձեր հօր աղօթքի ժամանակ ոտքի կանգնեց։ Այժմ ուղում եմ իմանալ, թէ այստեղ է ձեր մայրը քնած։

**Էլիաս.** Այն, բայց ոչ առաջին, այլ միւս սենեակում։

**Անծանօթ.** Հիմա, երբ վեր կենայ—կգայ այստեղ—այստեղով կանցնի կերթայ եկեղեցի ուր ձեր հայրն է—ճիշ չէ—նա կգայ չէ—այստեղով կանցնի, չէ։

Հլիաս. Այն, ինքներդ էք ասում:

Անձանօթ. Այժմ ձեզ հարցնում եմ, ոչ, խնդրում եմ—  
կհամարձակուեմ այստեղ մնալ—նորան սպասել—տևսնել. Ես  
ջերմ ցանկութիւն ունիմ այդ բանի, որին երկար դիմադրել  
անկարող եմ: Ես ներս չեմ գնալ մինչև կզգամ, որ պէտք է ներս  
գնամ: Եւ այստեղ էլ ճանապարհի վերայ չեմ նստիլ: Բայց երբ ըզ-  
դում եմ անդիմադրելի տեսն ներս գնալու և այնտեղ սպասելու  
ու տեսնելու՝ կհամարձակուեմ:

Հլիաս. Այն:

Անձանօթ. Շնորհակալ եմ—մէկ էլ ուզում էի տաել,  
որ այս օրն իմ կեանքի վճռական օրն է. (աջ կողմից  
դուրս է գնում դէպի նախագաւիթթը):

### ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Հլիաս. Այսօր իմ կեանքի վճռական օրն է: (Պաստօր  
Կրօյէրը տերը ասած է այս օրինից ներս է մնոնում)  
Կրօյէր, տեսար այն մարդուն, այնտեղ աջ կողմում:

Կրօյէր. Այն, ո՞վ էր նա:

Հլիաս. Չես ճանաշում:

Կրօյէր. Ո՞չ:

Հլիաս. Յամենայն դէպս մի տարօրինակ մարդ:—Այս օրն  
իմ բաղդի վճռական օրն է— Աստուած իմ այդ խօսքերն  
իմ սրտից էր:

Կրօյէր. Ես ևս այդ էի սպասում, Հլիաս: Այսօրուան օրը  
քեզ համար մեծ օր է լինելու: Ո՞վ կարող է հակառակը պըն-  
դել այն բոլորից յետոյ, ինչ որ այստեղ կատարւում է: Հարիւ-  
րաւոր աղօթողներ եկեղեցին շրջապատել են. իսկ նա ներսում  
առանց տեղեակ լինելու այդ բանին, սորանից գեղեցիկ բան  
չեմ կարող երևակայել:

Հլիաս. Ճիշտ չէ— ես կամենում եմ ամեն մի վախ, ա-  
մեն մի կասկած ինձնից հեռացնել: Այսօրուան օրն ինձ համար  
վճռական օր է լինելու: Որպիսի մխիթարիչ խօսք: Ես սորա  
համար կոռուել, տանջուել եմք առանց նպատակիս հասնելու  
հիմա ինձ պիտի տրուի: շուտով ինձ խաղաղութիւն կտիրէ:—  
Կրօյէր, խօսենք այդ մասին:

Կրօյէր. Ո՞չ, այժմ ոչ: Ես մի յանձնարարութիւն ունիմ:

**Քեզ հաղորդելու:**

**Հլիաս.** Ի՞նձ, ումնից:

Կրօյէր. Ես քարոզչական նաւովն եմ վերադարձել:

**Հլիաս.** Այդ գիտեմ:

Կրօյէր. Սյժմ եպիսկոպոսն ու պատօրներն ուղղում են իմանալ: արդիօք այս տունը մի երկու ժամով կարող են իրանց տրամադրութեան տակ ունենալ:

**Հլիաս.** Ինչո՞ւ համար:

Կրօյէր. Ուղղում են այստեղ ժողով անել և պարզել իրանց համար այն բոլորը, ինչ որ այստեղ տեղի է ունենում: և մենք մի ուրիշ տեղ ջգլաւենք, որտեղ մենակ լինել կարող էինք: — Շատ մի զարմանար, մեր արուեստաւորներիս, մանաւանդ քարոզիչ արուեստաւորներիս վերայ պարտաւորութիւն է դրուած՝ այս բոլորի վերայ աւելի հանգիստ և սառը նայել, քան ուրիշները — հասկանում են:

**Հլիաս.** Բայց դա երկար ու բարակ, անյարմար աններդուանակսութիւն կլինէր:

Կրօյէր. Նա կարող է ներդաշնակութեան մէջ լուծուել: Ուվ կարող է հարացին դիմադրել:

**Հլիաս.** Ճիշտ ես ասում: Բայց այնտեղ ներսում, Կարծես մենք մէջ ենք մտնում հօր և մօր մէջ: Որովհետեւ երբ հայրս նորից սկսի երգել, այն ժամանակ մօրս սենեալի դուռը չենք կարող բանալ:

Կրօյէր. Ի՞նչ ես կարծում, քո ճնողները նրանց ինչ կը-պատասխանէին:

**Հլիաս.** Անպայման դրական: Ճիշտ ես ասում: այս տունը նոցա է արւում — ես ինքս կհոգամ —:

Կրօյէր Ես բոլորը կկարգադրեմ: բայց մօրդ սենեալի դռները փակ են: չէ:

**Հլիաս.** Սյժ:

Կրօյէր. Երբ նոքա արդէն ներսում կլինեն, դռներն ու պատուհանները ես կփակեմ:

**Հլիաս.** Կարող էք նոյն իսկ փակուել: Ես ուղղում եմ դուրս գնալ, մասնակցել նրանց, որոնք յոյսով, հաւատով սպասում են, որ այսօր մեծ բան պէտք է կատարուի և նոքա ճիշտ որ ի զուր չեն սպասում: (Հլիասը գնալով):

Կրօյէր. Մենք էլ աղօթենք, Ելիաս:

**Հլիաս.** Այս, ես գոնէ պէտք է փորձեմ (դուրս է գնում):

## ԶՈՐՈՌՈՐԴ ՏԵՍԻԼ

Կրօյէր. (Չախ կողմից գալով) բարի եղէք. (առաջ է անցնում եւ պատուհանը փակում. եւ այդ ժամանակ եպիսկոպոսը եւ պատօրները ներս են մտնում: Կրօյէրը նորից յետ է գնում եւ դուռն էլ լիակում):

Բլանկ. (Կրօյէրին). այս տանը ծանօթ էք. չէ՞նք կարող մեզ համար ուտելու բան գտնել:

Եպիսկոպոս. Դիտեմ, որ մենք այստեղ ծիծաղելի դեր ենք խաղում, բայց բանն այն է, որ մենք ծովային հիւանդ էինք:

Բրայ. Եւ մեզ մօտ ուտելու բան չի մնացել:

Եպիսկոպոս. Վերջապէս խաղաղ տեղ հասանք և հենց որ պատրաստում էին մեզ համար բան եփել ու տապակել...

Բրայ. Հրաշքն ակաւ:

Փալկ. Աս չափից դուրս քաղցած եմ:

Կրօյէր. Հազիւ թէ՞այստեղ մէկը մեր ուտելու մասին մտածած լինի. բայց դարձեալ գնամ տեսնեմ: (Դուրս է գնում):

Իենզեն. Աս ձևական ինքնախարէական քաղցածութեան հիւանդ եմ և թէպէտ այդ մասին՝ կարդացել եմ—բայց չէ որ կարդում ես շատ բան, որին չես հաւատում:

Առանձին բաւականութեամբ նայում եմ դաշտի կաքաւներին:

Փալկ. Կաքաւներին:

Իենզեն. Այո, տապակած կաքաւների հոտ եմ առնում:

Բլանկ. Կաքաւների:

Մ' ի քանիսը. Ուրեմն կաքաւներ կստանանք:

Կրօյէր. (Որ վերադառնում է եւ դեռ դուան մօտից պատախանում). Յաւօք սրտի ոչ: Աս արդէն խոհանոցում, նոյնպէս և ճաշարանումնէի, բայց դատարկութիւն, Ոչ մի բան, ոչ մի մարդ:

Բրայ. Ո՞չ մի մարդ:

Փալկ. Բայց իմ փորը վեց-վեց է անում:

Եպիսկոպոս. Ընկերներ, թողնենք ծիծաղացնելու դերը. պէտք է անհրաժեշտին ձեռնարկեր, Խնդրում եմ նստել (ինքը նստում է բազմոցի վերայ, իսկ միաներն՝ աթոռների): Որքան կարելի է կարճ և հանդարտ խօսենք, որովհետեւ այս տանը հիւանդ կայ: Պէտք է նախօրօք պայմանաւորուենք. թէ մեզ ինչպէս պահենք:

Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ հոգեսրականն ամեն մի այսպիսի դէպօւմ—ըստ օրինաց—պէտքէ իրան անկողմնակալ պահէ. ոչ հակառակի և ոչ էլ համաձայնի, մինչև որ շարժումն այնտեղ հասնի, որ կարողանայ խաղաղ և հանգիստ կարծիք յայտնել:

Այսօրուայ իմ ցանկութիւնն էլ այն էր, որ ափ չիջնէինք, այլ մօտով անցնէինք, Բայց ցաւում եմ, որ մեզ այդ չաղողուեց:

**Պաստօրները.** Մեզ այդ չաղողուեց, մեզ այդ չաղողուեց:

**Եպիսկոպոս.** Այստեղ, որտեղ մարդկանց հաւատի շնորհիւ այսպէս ասած հրաշքը տանն է, նոքա կամենում էին այստեղ գալ և նրանց դորա համար չեմ մեղադրում: Բայց որովհետև մենք նրանց հետ էինք և մինչև անդամ միևնույն նաւում, այդ պատճառով կամենային մեր կարծիքներն ևս այս հրաշքի մասին լսել: Եթառյ, երբ մենք քարոզչական ժողովն գնանք, այնտեղ ևս կցանկանան մեր հայեացքն այդ բանի վերաբերեալ լսել: Բայց ինչ է այդ հայեացքը:

**Իրոյէր.** Եթէ ինձ թոյլ տրուի ամենահամեստ կերպով կարտայալտեմ. կամ մենք հրաշքին հաւատում ենք և ըստ այնմ վարուում և կամ չենք հաւատում և դարձեալ ըստ այնմ վարուում:

**Եպիսկոպոս.** Հմ, կայ և մի երրորդ բան, երիտասարդ ընկեր:

**Պաստօրները (իրար հետ փափսալով).** Կայ մի երրորդ բան: Օ, կայ մի երրորդ բան:

**Եպիսկոպոս.** Քանի մարդս ծերանում և փորձւում է, այնքան դժուար է իւր համար համոզմունք կազմում— մանաւանդ բնութեան ուժից վեր բաների մասին: Հազիւ թէ այս դէպօւմ ժամանակն ու հանդամանքները թոյլ տան մեզ հետազօտութիւն անել: Ընդունենք մի րոպէ, որ մենք տարբեր կարծիքների ենք գալիս: ինչպիսի ընդունելութիւն կգտնէր հրաշքի մասին հոգևորականների այդ իրարանցումը. մանաւանդ այս կասկածաւոր ժամանակին. այն մասին, թէ հեռու մի որևէ է տեղում, հիւսիսում հրաշք է կատարեալում, թէ ոչ:

Ես տեսնում եմ, որ պաշտօնակից ծերունի Բլանկը խօսել է ցանկանում:

**Բլանկ.** Եթէ ես ձեր սրբազնութեան ճիշտ հասկացայ,

այն ժամանակ կարծեմ մեր գործը չէ հենց՝ սկզբից վճռել—թէ այստեղ հրաշք գոյութիւն ունի թէ ոչ՝ որովհետև սա բացառապէս Աստուծոյ գործ է:

Նպալիսկոպոս. Այս, Աստուծոյ գործ է, Այդ է ճշմարիս խօսքը: Նորհակալ եմ քեզնից, հին ընկեր:

Թլանկ. Նս այն կարծիքին եմ, որ ինչպէս ամեն բան ընութեան մեծ օրէնքներին է ենթարկուում, այնպէս և հրաշքը, թէպէտ մենք այդ օրէնքը չենք տեսնուում. ես ընդհանրապէս նոյն հայեացքը ունիմ, ինչպէս պրօֆէսօր Պետերզօնն է ենթադրուում:

Քալկ. Հենց այն գրքում, որ լոյս չի տեսնուում:

Թլանկ. Բայց որ մտածում է մի երկու տարուց յետոյ հրատարակել:

Նթէ այդ այդպէս է, ինչ նշանակութիւն կունենայ հրաշքը ինքնըստինքնեան—թէ մենք կարճատեսներս այդ տեսնուում ենք թէ ոչ; Նթէ հասարակութիւնը հաւատուում է՝ որ նա այդ տեսնուում է, այն ժամանակ մենք նորա հետ Աստուծուն կփառաբանենք:

Նպալիսկոպոս. Ուրեմն դու այն կարծիքին ես, որ մենք հրաշքը պէտք է ընդունենք:

Թլանկ. Ոչ ընդունել ի ոչ չընդունել: Մենք միայն ժողովրդի հետ միաբանութեամբ կփառաբանենք Աստուծուն. ահա բոլորը:

Նպալիսկոպոս. Ո՞չ, իմ հին ընկեր. լոկ փառաբանական երգերով բանը չի վերջանալ:

Պաստօրներ. (Նրար հետ փսփալով). Լոկ գովարանական երգերով բանը չի վերջանալ:

Նպալիսկոպոս. Խօսքը պատկանում է պաշտօնակից ընկեր Բրային:

Բրայ. Նս իսկապէս հրաշքը իսկոյն չընդունելու ոչինչ հակառակ բան չեմ տեսնուում. միթէ սա մի հազուագիւտ բան է: Նս ամեն տեղ և միշտ հրաշք եմ տեսնուում. իմ ծխի մէջ այնպէս ընտելացել ենք այդ բանին, որ հենց արտաքոյ կարգի բան կլինէր, եթէ այդ չտեսնէինք:

Ֆալկ. Բրայն այնքան բարի չէր լինի, եթէ մեզ իւր ծըլում կատարւող հրաշքի մասին պատմէր:

Նպալիսկոպոս. Ո՞չ, այդ մեզ ճանապարհից կշեղէր. Դուք կանգնեցիք, ցանկանում էք խօսել:

**ԻԵՆԳԷՆ.** Այս, խնդրում եմ: Այս դէպքում բոլորը կախուած է այն իրողութիւնից, որի առաջ կանգնած ենք. միթէ սա հրաշք է.—եթէ ոչ հրաշքներ: Թէ հրաշք դոյութիւն չունի: Երօյէր. Անտարակոյս:

**ԻԵՆԳԷՆ.** Այսն. մի հրաշք պէտք է հետազօտուի, ստուգութիւն, արտակարգ բժշկական հեղինակաւոր համարում և հարկաւոր դէպքում վկաններից ցուցմունք, որ վերցրած լինի հեղինակաւոր, վստահելի իրաւաբաններից. այդպիսի կանխատեսութիւնից յետոյ միայն հողեսրականութիւնը կարող է հաստատապէս հոգեսր վճիռ տալ: Բայց հոգեսրականութիւն ասելով, չեմ հասկանում այն, որ մենք այստեղ տեսնում ենք և շրջող քարոզիչներին կամ, այսպէս ասած, հողեսր կոչման կամ լուսաւորող դասակարգին: Աս այժմ, ինչպէս և միշտ, հասկանում եմ ամուր, չոր ու ցամաք «ճշմարտութիւն» որչափ պարզ, խտացած և ամուր է:

### Յալկ. Լսեցէք, լսեցէք:

**ԻԵՆԳԷՆ.** Գուցէ և պարզուի, որ ոչ այստեղ և ոչ այլ տեղ հրաշք չի կատարում ոչ այժմ և ոչ երրէ: Որովհետև հրաշքը չի գալիս ողջունուելով հարիւրաւորներից, գուցէ և հազարաւորներից, որոնք հետաքրքրութեամբ սպասում են: Ո՛չ, ճշմարիտ հրաշքը գալիս է ճիշտ, ուղիղ, սուս ու փուս և դէպի համեստները, հանդարտները և չոր ու ցամաքները:

### Յալկ. Բոլորովին իմ սրտից է խօսում:

**Կրօյէր.** Զեր թոյլտութեամբ ուզում եմ մի նկատողութիւն անել: Այն ժամանակ, երբ ես որպէս հոգեսր հովիւ այստեղ պաշտօն էի վարում, տեսայ, որ շատ անգամ հենց չոր ու ցամաք մարդիկ աւելի հեշտութեամբ են սնահաւատութեան գիրկն ընկնում:

### Բլանկ. Բոլորովին իմ փորձած տեսածը—արդարև:

**Երօյէր.** Նոքա այնքան անվստահ են, որ շատ անգամ այն, ինչ որ բոլորի համար պարզ է, չեն ընդունում: Բայց նոցա մի անբացատրելի կրկիւլ է աիրում և այնպիսի բաների աղջեցութեան տակ են ընկնում, որ մեզ բոլորովին անծանօթ են: Աս շատ անգամ մտածել եմ, որ ուժից վերին ձգտելը մարդկանց համար այնպիսի մի ժառանգական պահանջ է դառել, որ եթէ նոքա մի կողմից դիմադրում են...

ԲԼԱՆԿ. Միւս կողմից էլ առաջ գալիս. բոլորովին իմ հայեացքը:

Յալկ. Այս, չոր ու ցամաքների մօտ է գնում, թէ պարարտների, այդ թողնենք. Ես ուզում եմ ուղղակի ձեր կարծիքն իմանալի Մի՛թէ բանն այնտեղ է հասել, որ մենք պէտք է հրաժարութենք այն բոլորից, ինչ որ եկեղեցու կանոնաւորութեան և պարզութեան վերաբերեալ ձեռք ենք բերել Մի՛թէ նորից պէտք է սկսենք մոլեռանդութեան ետերից ընկնել, ինչպէս օրդինական չղջիկներ:

Բրայ. Ինձ չէք ակնարկում այդ ասեղով (պաստօները բարձր ծիծաղում են):

Եպիսկոպոս. Սո, սո, չմոռանանք որ ներսը հիւանդ կայ:

Փալկ. Հրաշքի պահանջը հաւատի ծառի վերայ առաստիւթով լցուած այնպիսի մի ելունդ է, ինչպէս և ամբողջ ժողովրդական քարոզչութիւնը—մի անկանոնութիւն, մի հիւանդութիւն, մի արտավիժում (Ներկայ եղողները ծիծաղում են. մի քանիսը հազում էլ են):

Եպիսկոպոս. Սո, սո, սո:

Փալկ. Հրաշքը որ հոգևորականներից չի ճանաչուած, այսպէս ասած, նախագահութեամբ բարձր հոգնոր իշխա. նոութիւնից չի հաստատուած և օրինականացրած, այդպիսի հրաշքը ինձ համար լոկ դատարկաշրջկութիւն, դատարկա-պորտութիւն, դուռը կոտրել գողութիւն է: (Եպիսկոպոսը եւ պաստօրները կամաց քթի տակ ծիծաղում են, աշքերը դէպի նա ուղղելով):

Շատ լաւ է պարզամիտ և բարի լինել Ես ևս մի ժամանակ այդպէս եմ եղել: Բայց որպէս հոգևորական մի մեծ քաղաքում, պէտք է ժամը մէկին յուղարկաւորութեան ժամանակ միւսների հետ ախուր լինես, յետոյ ժամը երեքին հարսանիքին ուրախ գուարթ՝ խնդացողների հետ. ժամը չորսին գուցէ և անմիջապէս դորանից յետոյ մեռնողի անկողնի մօտ և վերջապէս ժամը հնգին պալատում ճաշի լինել, այն ժամանակ իրօք որ կարողանում ես մարդկային դիւրաբեկութիւնը ճանաչել. Դու սովորում ես աւելի շուտ իրաւագիտութեան սկզբունքներին վստահանալ, քան մարդկանց:

Դոկ որտեղ հրաշքն է երեսում, այնտեղ ամեն մի իրաւագիտութեան սկզբունք կրքերի անկարգութիւնների զոհ է դառնում:

Կաթողիկէ եկեղեցին փորձեց, հէնց այդ պատճառով հրաշքից մի իրաւագիտութեան սկզբունք կազմել, բայց դորանով բոլոր հասկացողների առաջ իւր վարկը ձգեց և գոյութիւն ունի միմիայն ընկածների, շահասէրների համար:

Մի անգամ ես գտնուամ էի կանանց մի ընկերութեան մէջ, որտեղ բացի ինձնից կային և քսան կին (ուրախովթիւն, հըրճուանք). մէկը նորանից զդաձգութիւն ստացաւ. իսկոյն և երկրորդը և էլի մի ուրիշը. մի խօսքով թուով և հոգի (սաստիկ զուարժութիւն, զուարժանք). ես իսկոյն վերցրի ջրամանք, սկզբում այս վեցի վերայ ջուր ածեցի, յետոյ մնացածներից մի քանիսի վերայ. որովհետև այդ բանը տարափոխիկ է. (սաստիկ ծիծաղուած են):

**Ծաղիկովոս.** Սո, սո (ինըն իրան զապելով. բայց նորից սկսումէ, միաները նոյնպէս: Նորից իրան զապելով) Սո, սո.

**Ֆալկ.** Այ այդպէս և կարծում եմ ջուրը դորա համար շատ նպատակայարմար է (պաստօրները ծիծաղուած են, թաշկինակները բերաններին հազում, մի երկուան ինչան շնորհակալութեան Փալկին ծեղովլ նշան են անում):

**Կրօյէր.** Մենք ֆալկին ճանաչում ենք, որպէս մի լաւ մարդ—չնայելով նորա տարօրինակութիւնների. Բայց կարծում եմ, որ եթէ այրի պառաւ տիրուհին—որ արդէն մօտ 100 տարեկան է—այնտեղ լինէր, ֆալկը ամենից վերջը նորա գլուխին ջուր կածէր, թէպէտ նա մեր մէջ որպէս մի կենդանի հրաշք լրջում է և իւր հաւատով բոլորին վարակում: Նոյնպէս և այն երիտասարդ աղջիկը՝ Ագաթիա Ֆլորիօդէնը, որ պառավին խնամում է. Հրաշքը, որ նորան կենդանացրեց, ինքս և ինձ հետ շատերը տեսանք: Եթէ մենք մեր աշքերին և ձեռքերին հաւատայինք, նա մեռած սառած էր: Զանգն աղօթեց նորա մօտ, ձեռքին առաւ և աղջիկը ոտքի կանգնեց: Կարծում եմ, որ մի հաւատացող մարդու վկայութեան կհաւատաք: Նոքա երկուսն էլ այժմ այստեղ են:

**Շատերը.** Այստեղ են.

**Կրօյէր.** Նոքա գուցէ այստեղ են գալիս: Այո, այստեղ են գալիս. թէպէտ շատ դանդաղութեամբ: Պառաւն ուզում է տիրուհի Կարային տեսնել, նորան, որին նոյն իսկ վիլուածքի, լաւաների ձայնը չգարթեցրեց:

**Նայեցէք** ինքներդ այդ պառաւին, խօսեցէք նորա հետ,

ինչպէս և նորան հետևող աջջկայ հետ և դուք այնպիսի պարզ և համոզեցուցիչ պատասխան կստանաք, ինչպէս իրանց տեսքը և կերպարանքն է արտայայտում:

Եւ աւելի շատ բան է ուսուցանում այս մէկը, քան մեր, գոկորորական հետազօտութիւնները:

Ես այս մէկիդ մեղադրելու նպատակով չեմ ասում: — Մինչև իմ այստեղ, որպէս հոգեսոր հովիտ գալս, ես էլ այդպէս էի մտածում, ինչպէս դուք: Ոչ ոք այն ժամանակ ինձպէս վիշտ չէ գուացել, որ այդպիսի չնշին փարդապետութիւնների և սահմանափակ մեկնարանութիւնների դիմաց ենք գտնուում: Մենք առանց հրաշքի անշափ աղքատ ենք և հրաշք խնդրելու արիութիւնից զուրկ: Եւ մեզ այնպէս ենք ձևացնում, իրը թէ կարող ենք արհամարհել և կամ կարիք չենք զգուս այդ բանին:

Կարծեմ ձեզանից խրաբանչիւրին այնքան ճանաչում եմ, որ կարող եմ ասել թէ՝ եթէ դուք համարձակուէիթ, կարողանայիք հաւատ ընծայել որ այստեղ հրաշք է կատարւում, այնպիսի մի հրաշք, ինչպիսին Սուլը դիրքն է ասում քրոլորը, ուկեր այս տեսնում էին, հաւատում էին», ասում եմ ինչքան էլ ձեզանից մէկը թուլասիրտ լինէր, ձեր աւելորդ օրերը կզոհիք դորան, որպէս զի հրաշքը ուրիշներին քարոզէիք, ծանուցանէիք: (Շարժում մանաւանդ ծերերի մէջ):

Ինչ կմնար քրիստոնէութիւնից, եթէ եկեղեցին այդ հրաշքից զրկուէր:

Հլիաս. (Ներս զալով) Ներեցէք ինձ—այստեղ՝ մի պառաւ այրի տիրուհի կայ որ իմ մօըը տեսնել է ուզում.

(Թուրորը ոտքի են կանգնում, դրսում երեսում է այրի տիրուհին եւ Ազաթիան: Հլիասը բանում է աջ դուռը եւ ինցն էլ նրանց հետեւում պաստօղները բռնում են աթոռներն եւ յարգանքով յետ քաշում):

Այրի տիրուհին. (Շէմքն անցնելուց յետոյ) Թա՞ղ ինձ, Ագաթիա—ես կամենում եմ մնանակ մնալ—միայնակ—որովհետև այնտեղ, որտեղ Տէրն է եղել, սուրբ է: Այստեղից աչքս աշքին է ընկնում—աւելի լու է միայնակ մնալ:

(Պառաւը կանգնում է այնպէս, որ կարող է Կլարայի սենեակի ներսը տեսնել. յետոյ կունանում, խոնարհում, ծեռքերը քազկատարած քարծրացնում, նորից ներս նայում, նորից խոնարհում շուր գալի եւ յետ գնում):

Նա սպիտակ էր—փայլուն սպիտակ—այդպէս էլ ընդունում էի—փայլուն սպիտակ և քնած է որպէս մի երեխայ. ես աշերով հետևեցի—լուսաւորւում էր—մին ինչպէս լուսաւորւում էր: Շնորհակալ եմ, որ ինձ մենակ թողիք:

Ազաթիա. Միթէ մենակ էիր:

Այլի տիրունիշ. Բոլորովին մենակ. ոչ ոք բացի ինձնից: Նա սպիտակ է ճառագայթաղարդ: (Շրկուն էլ դուրս են գնում):

Ելիաս. (Աջից զալով). Մրկու դռներն էլ կրկին փակուած են: Հիմա էլ ուզում եմ այս դուռը փակել: (Դուրս է գնում):

(Պաստօրները դեռ անշարժ կանգնած են):

Կրօյէր. Խօսեցիք նորա հետ:

Եպիփառպատ. Ոչ:

Կրօյէր. Կարծես թէ բոլորի գէմքերին մի տեսակ լոյս էր շարժւում: Եւ ես կասեմ թէ ինչու—Մարդիկ, որոնց գերայ հրաշք է ցոլացել, լոյս են արտացոլում:

Հիմունք նորից այդ մասին: (Հաւաքրում են եւ նորից նստում):

Իենզէն. Վատահանում եմ մի հարց առաջարկել—դարձն կս ընդունում էք որպէս մի հրաշք, թէ ոչ:

Կրօյէր. Այն՝ ինչ որ մենք համարում ենք դարձի հրաշք, հոգեբանօրէն հետևենք նորան քայլ առ քայլ Ուրեմն հրաշք գոյութիւն չունի. միւս կրօններումն էլ գոյութիւն ունին դորա նման դէպքեր, ինչպէս և պարզ բարոյական դարձը. թէպէտ դա խաղաղութեան—լուռթեան մէջ է կատարւում: Խակ քրիստոնէութիւնը, որ հիմնուել է հրաշք չնորհիւ և ժամանակի ընթացքում կորցնում է իւր հրաշքի ուժը-- ուրեմն էլ ինչ հրաշք—ուրեմն լոկ բարոյական հրահանզներ:

Փալկ. Քրիստոնէութեան յատուկը հրաշքը չէ՝ այլ Յարութեան հաւատառլ:

Կրօյէր. Միթէ բոլոր կրօններն էլ այդ չունին: Միթէ բոլոր մարդիկ դորան կրօնական զգացմամբ չեն հաւատում:

Ֆալկ. Բայց ոչ երեխայի անմեղութեամբ:

Կրօյէր. Շատ ճիշտ է. առանց դորան:

Ֆալկ. Եւ հէնց այդ պատճառով՝ ոչ ամբողջ անձնուրացութեամբ:

Կրօյէր. Ո՞չ. այդ արդէն ճշմարտութիւն չէ:

Միթէ հաւատացեալների նահատակութիւնը քրիստոնէութեան հետ աշխարհ եկաւ: Միթէ սիրած բանի համար ապօռել և մեռնելը, այդ անսահման բաղդաւորութիւնը — մենք նախ քրիստոնէութիւնից սովորեցինք: Դա երկրիս վերայ կար թէ քրիստոնէութիւնից առաջ և թէ այժմս գոյութիւն ունի մտածողութեան ամեն մի ձեռվի:

**Նպիսկոպոս.** Ի՞նչ ես հասկանում քրիստոնէութիւն առելուի:

**Կրօյէր.** Ինձ համար քրիստոնէութիւնն անվերջ, աւելի քան մի բարոյագիտական հրահանգ է: Բայց այդպիսին աւելի մանրամասն և նուրբ գտնում ենք և այլ տեղերում, քան նոր կտակարանում: Ինձ համար դա անձնատուր լինելու ոյժից ել վեր է:

Կամ քրիստոնէութիւնը կեանք է Աստծու մէջ, հեռու երկրից և նորա բոլոր նախասահմանութիւնից, կամ թէ նա գոյութիւն չունի: Կամ սա առաւել է մի որևէ գաղափարի համար անձնուրացութիւնից, ույսինքն մի նոր աշխարհ, նոր հրաշք կամ թէ չկայ քրիստոնէութիւն: (Ինքն իրան տատանառում է, շարժում է և թուլացած խոնարհում անզօր):

Չատ բան պիտի առէի, — բայց այլ ևս չեմ կարող:

**Նպիսկոպոս.** Խսկոյն. Երբ դու այսօր տախտակամած եւ կար, սիրելի Կրօյէր, ես տեսայ, որ ուժից վեր աշխատած և վշտահար ես: Բայց այդպէս պատահում է այն բոլորին, որոնք պաստօր Զանդի շաւղովին են ընթանում:

**Անձանօթ.** (Նախագաւթի գուռը բանում է, առանց նորից ծածկելու և նահանջելով՝ մօտենում) Համարձակուում եմ խօսք խնդրել (բոլորը յստ յետ են դառնում և ոտքի կանգնում):

**Նպիսկոպոս.** Դո՞ւ ես, Բրատո:

**Մի քանիսը.** Պաստօր Բրատուր:

**Միաները.** Միթէ Բրատոն է:

**Նպիսկոպոս.** Զէ որ դու մեզ հետ չեկար, ինչպէս է որ այստեղ ես:

**Բրատո.** Ես սարերով եկայ:

**Նպիսկոպոս.** Սարերնվ—ուրեմն ոչ քարոզչական ժողովին:

**Բրատո.** Ոչ, ես այստեղ էի ուզում գալ:

**Նպիսկոպոս.** Հասկանում եմ:

**Բրատո.** Հրաշքի պատճառով եմ եկել.—երեկ ես դալիս էի, որ ձիւնակոյտ թափուեց, կանգնած էի սարերի վերայ և

տեսալ թէ ինչպէս սարի մի մասը փուլ եկաւ և լսում էի զանգի ձայնը: Եւ մինչև հիմա այստեղ եմ Այսօր էլ ճաշից առաջ տեսայ, թէ ինչպէս մի հիւանդ եկեղեցի էին տանում, ինչպէս նա պաստօրի երգելու ժամանակ ուրբի կանգնեց, չնորհակալ եղաւ Աստծուց, փառարանեց և գնաց: — Թոյլ կը- տաք շարունակել:

*Նպիսկոպոս. Ի հարկէ:*

*Բրատո. Որովհետև ես վշտահար մի մարդ եմ, եղբայր- ներ, եկել եմ ձեզնից օգնութիւն խնդրելու:*

*Նպիսկոպոս. Խօսիր, սիրելիս, խօսիր:*

*Բրատո. Ինքս ինձ ասում եմ. վերջապէս այստեղ մի հրաշքի առաջ եմ կանգնած: Այն, բայց միթէ սա հը- րաշք է: Որովհետև այս միակ տեղը չէ որ ես փնտ- րել եմ, որպէս զի այս տեսնեմ, սրան հասնեմ: Ներոպայի- բուրոր հրաշտեղերից, որտեղ ես եղել եմ, միշտ հիասթա- փուած եմ վերադարձել Հաւատն այստեղ աւելի մեծ է և ակ- ներեւ: այս մարդը մեծ մարդ է: Իմ տեսածը գերբնական ու- ժով կաշկանդեց ինձ: Բայց նորից կասկածեցի: Տնս, սա- ինձ համար մի անէծք է: Ամբողջ եօթ տարի այդ մեղքն ինձ վրայ եմ կրել, որովհետև որպէս հոգեորական հաւատացեալ- ներին հրաշք եմ խոստացել: Նոցա խոստացել եմ, որովհետև այդպէս է գրուած, թէպէտ ինքս կասկածել եմ, կասկածել եմ, որովհետև չտեսայ որ գոնէ մի հաւատացողի բաժին ինէր: Եօթ տարի քարոզել եմ այն, ինչ որ ինքս չեմ հաւատացել:*  
*Եօթ տարուայ ընթացքում, երբ դժուար օրեր էին գա- լիս (որ յաճախ են գալիս, ինչպէս և անքուն զիշերները) հէնց գորա համար ջերմեռանդ աղօթքիս ժամանակ հարցնում էի. մւր է հրաշքի ոյժը, զօրութիւնը, որ զու քո հաւատացեալնե- րին խոստացել ես: (Լաց է լինում):*

*Նպիսկոպոս. Ճիշտ ես ասում, սիրելիս, դու միշտ այդ- պէս ես վարուել:*

*Բրատո. Կապակցուած խօսքերով մէկը միւսից զօրաւոր նա մեզ ասաց, հաւատացողին այս ոյժը տրուած է, այն, կարո- ղութիւն աւելի մեծը կատարելու՝ քան մարդու որդին:*

*Ուր մնաց այդ: Միթէ 18 դար անսահման հաւատոյ աշ- խատանքից յետոյ դեռ այն աստիճան հաւատացող չի եղել. որ կարողանար մեր մէջ մի հրաշք կատարել: Աստծու խոստա- ցածը դեռ շարունակ մնում է չկատարուած, չիրականացած:*

Հաւատալու յատկութիւնը չի կարող նուազել, ադ զօրութիւնը չի կարող անցած գնացած համարուել: օհ, ոչ!

Աւելի քան 18 դար հին խոստումը պէտք է շատ բանեւ ըի մէջ, այս հազարաւոր տարիների շատ սերունդների մէջ անելով՝ բազմապատկած դաստիարակութեամբ ժառանգութեան բաժին եղած լինի:

Աւ միթէ այդ դեռ բաւական մեծ չէ հրաշք տալու համար: Միթէ բոլոր հաւատացողների փափագը միանալով դարձնալ չի կարող մի ինդիվիդում առաջ բերել, որ իւր հրաշալի զօրութեամբ բոլոր տեսնողներին հաւատացողներ դարձնէր, ուղիղ այնպէս, ինչպէս Սուրբ Գիրքն է ասում բոլորը ովքեր այս տեսնում էին, հաւատում էին: Ուրեմն մի հրաշք, որ բոլոր նայողներին հաւատացող է դարձնում: Բայց հազար-հազարաւորներն ուրանում, ընկնում են, որովհետև ինչքան էլ խոստանում են, հրաշք չի երևում:

Մի տղամարդ այժմեան գիտութեամբ, մեր ժամանակի մի ուսեալ կին, գոռ չեն նրանով, ինչ որ սկզբում մի մարդ կամ մի կին առանց այլնայլութեան հաւատում էին: Ոչ թէ այն պատճառով, որ իրանց հաւատի ոյժը նուազ է, ոչ, նոցա անձնուիրութիւնը պէտք է մի տեսակ աւելի խոր և սրտանց լինի, քանթէ բնական է և իրաւացի և ձեռք բերելն էլ շատ դժուար: Ով այս ունի, նորան է վիճակուած ամենալաւ բաժինը, ինչ որ երկիրը կարող է մեզ ընծայել:

Մարդկութեան համար միակ բարձր իդէալը՝ կրօնը չէ: Խսկ եթէ բարձրագոյնն է ցոյց տալիս, մարդ կարող է ապրել և մեռնել այն բոլորի համար, ինչ որ ինքը սիրում է, օրինակ՝ իւր հայրենիքի, ընտանիքի, համոզմումքների համար և այլն: Բայց քանի որ դա ամենից բարձրն է, որը մարդկային կեանքի բնական սահմանների մէջ գոյութիւն ունի, խսկ դու քո հայեացքը դեռ քիչ էլ բարձրին ալիսի ուղղես—այն ժամանակ՝ դուրս այդ սահմաններից՝ դէալի հրաշքը: (Մեծ շարժում պաստօրների մէջ:)

Ֆալկ. (կանգնելով) մի տեղ մի բարկացկոտ խօսք կայ այն սերնդի համար, որ չի ուզում հաւատալ. այն ժամանակ տեղի են ունենում հրաշքներ և նշաններ:

Բրաստ. Նւ գիտէք թէ ինչ է պատասխանում այդ սերունդը ամենք խնդրում ենք միայն նշաններ, որ Աստուած խոստացել է—խոստացել է նրանց, որոնք հաւատում են. միթէ

դուք ձեր մէջ մի հաւատացող չունիք։ Ուրեմն ինչ էք ուզում մեղնից։ ահա նորա պատասխանը։

Իսկ ցոյց տուէք այդ մարդկանց մի հրաշք, մէկը, որին կասկածանիք ամենասուը գործիքներն անդամ անկարող լինէ-ին անդամանատ անել, որի համար կարելի լինէր ասել քողո-րը, ովքեր այս տեսնում էին՝ հաւատում էին, այն ժամանակ յիշաւի կտեսնէք, որ ոչ թէ հաւատի զօրութիւնն է, որ պա-կասում է, այլ հրաշքը։ (Շարժում հոգեկորականների մէջ)։

Հարկաւոր չէ, որ խոստումը թեթևամիտ հասկա-ցողներից ներքուստ դրուատուի։ Հաւատի վերաբերմամբ կասկածաղները, որ կազմում են մեծամասնութիւնն և ուժե-ղագոյնը, հենց դռքա իրանք ամեն սրամիտ կասկածանիքի մէջ են։ Միթէ կայ մէկը, որ քաղաքակրթուած աշխարհը ճանաշե-լով հանդերձ այս չգիտենայ։

**Շատերը.** Որքան իրաւացի է։

Բրատու. Եթէ մեր մէջ մի հրաշք երևար, այնպիսի մեծ—որ քոլորը ովքեր այս տեսնէին հաւատային։ . . .

Նախ և առաջ միլիօնաւորները խոփկ տալով կգային. բոլորը, որոնք կարօտութեան և տենչանքի մէջ են ապրում, օրինակ՝ տարագրեալները, ճնշուածները, տանջուոր մաշուղնե-րը, մի խօսքով նոքա բոլորը, որոնք արդարութեան են ձգտում։ Կլսեն, որ Աստուծոյ քարիքն, այս խօսքի հին նշանակու-թեամբ կրկին աշխարհ է եկել—միևնոյն է թէ որտեղ, արտա-սուքի կամ ուրախութեան վայրերում։ Եթէ նոյն իսկ շատերը նրանցից գիտենային որ ճանապարհին մեռնելու են, դար-ձեալ կգերադասէին այս ճանապարհի վերայ մեռնել, քան մի այլ ճանապարհի վերայ ապրել։ Նոքա քաշ գալով կգային. իւրաքանչիւրն իւր գիւղից, իւրծից, բնակավայրից և տեղից. իսկ հիւանդները առաջ։ Քոլորը կգային դէպի Աստուծոյ յայտնութիւնը։

Բայց մենակ չեն մնալ նոքա, որոնք երկրիս վերայ ճշշ-մարտութիւն են փնտրում, բոլորը կհետևեն նրանց, նախ և առաջ նոքա՝ որոնք ճշմարտութեանն աւելի են տենչում. այն է՝ խոր և անկեղծ հնարազէտները, մեծագոյն մտածողները։ Նոցա ջերմեռանդութիւնն ամենից փառաւորը կլինի և հաւա-տըն ամենից զօրաւորը։ Որովհետև նոցա չէ պակասում դրդում դէպի ճշմարտութիւն և ոչ էլ հաւատալու կարողութիւն. ոչ, միայն հրաշքն է պակասում։

Նոքա բոլորը կամենում են ստուգութիւն և ճշմար-  
տութիւն, ինչ որ աշխարհիս այն մեծ հարցին է վերաբերում:  
Նոյն իսկ թեթև վերաբերութիւնները, որոնք որևէ է կարևոր կամ  
անկարևոր բան մի կողմն են հրեել, բոլորը առանց բացառու-  
թեան, հաւատի վերաբերմամբ փափազում են աւելի քան գի-  
տեն, որովհետև այդպէս են դաստիարակուել. Բայց արդեօք  
նոցա տրւում է այդ գրաւականը:

Գրաւական, ապահովութիւն այն մասին, որ խոստառմը  
ճշմարիտ է, երբ կտեսնեն այդ, այն ժամանակ կհաւատան և  
այն բանի՝ ինչ որ չեն տեսնում:

Այսպէս է եղել հենց սկզբից:

Ովքեր իրանց անձնական փորձառութեամբ շատ քը-  
չով են գոհանում, վարւում են ինչպէս մահմդականները,  
հրէանները և բուդդայականները, որոնք բոլորն էլիւրեանց անձ-  
նական փորձառութեան են ապավինում:

Ամենից առաջ ահա մի գրաւական, որ այդ անձնական  
փորձառութիւնը մի ընդհանուր ճշմարտութիւն է. հենց այն՝  
ինչ որ պակասում է:

Բայց ես հենց այդ եմ փնտրում, քան թէ խոստացածը:

Տէր իմ Աստուած, ես կանգնած եմ իմ վերջին փորձի  
առաջ:

Ծպիսկոպոս. Բրատա, Բրատո:

Բրատո. Իմ վերջին փորձի առաջ, որովհետև ներքին  
կուիւն իմ ուժից վեր է բարձրանում: Աս, որպէս հովեսրական,  
հրաժեշտ եմ տալիս, հրաժարում եմ եկեղեցւոց, հրաժարում  
եմ հաւատից-եթէ, եթէ, եթէ. (լաց է լինում):

Ծպիսկոպոս. Սիրելի որդի, դեռ առաջ...

Բրատո. Ո՞չ, ինձ մի ասէք — խնդրում եմ միայն օգնե-  
ցէք ինձ, որ կարողանամ ջերմեռանդ աղօթել: Որովհետեւ, ե-  
թէ այստեղ հրաշք չկայ, չկայ և ոչ մի տեղ: Զէ որ այս մարդն  
առաւել է, քան երկրիս վերայ եղող մեր ազնուագոյնները:  
Չկայ, և ոչ չի տեսել սրան հաւասար մի այլ հաւատացող.  
և ոչ էլ այնպիսի մեծ հաւատ, ինչպէս սա ունի:

Բոլորը. Այն, ճիշտ է:

Բրատո. Միթէ պարզ չէ: Սա մեծ հարստութեամբ,  
մեծ կարողութեամբ այստեղ եկաւ. իւր ունեցածը սորան նո-  
րան բաժանեց. Կարիք չկայ թուել այն դէպքերն, երբ սա իւր-  
կեանքը վտանգի էր ենթարկում, որպէս զի ուրիշին օգնու-

թեան հասնի: Եւ ոչ էլ թուել այն հրաշքները, որ մարդկանց հաւատով կատարել է: Դոցա ես չեմ հաւատում, որովհետեւ շատ էին:

Պաստօրներ. (Կամաց) Ինձ հետ ես նոյն է կատարուել Բրատոտ. Բայց գուցէ մենք հակառակը պէտք է մտածենք. այսինքն՝ այստեղ այն է կատարուում, ինչ որ մենք «հաւատար» ասելով հասկացել ենք: Այս հաւատոն առաջ է գալիս որպէս հրաշք տեսիլքի մէջ: Նա պէտք է հրաշքի վերայ ներդործի, գուցէ այդպէս պէտք է մտածենք:

Իսկ ինչ որ մենք մտածերու ենք, այդ բանի վերայ չը պէտք է այնպիսի կասկածով նայենք, ինչպէս ցաւօք սրտի ես այժմ արտայայտեցի: Սորա սէրը, սորա հաւատոն ինձ հնազանդեցնում էին. ինքու ինձ մեղադրում եմ և սորանից խորապէս նորողութիւն խնդրում:

Բոլորը. (Առանց բացառութեան) ես ես. ես ես:

Բրատոտ. Մենք չենք ճանաշում մի այլ լաւ մարդ, քան նա է. այլ լի հաւատ, քան նորանը, ոչ մի զօրաւոր՝ քան նա. միթէ հրաշքի մասին դեռ կասկածում ենք: (Չարժում):

Ինձնզէն. (Հենշալով) Նայեցէք դուռն վերայի խալին. սա երեկոյեան արևն է թէ մի ուրիշ բան:

Բրատոտ. Զգիտեմ: Բայց վստահ եղէք, որ եթէ հրաշք կատարուի՝ հազարաւորներն այստեղ են. թէկուզ մենք չը տեսնենք էլ:

Եթէ կարողանայինք լոկ ներկայ գտնուել—այն, մասնակցել. մտածեցէք թէ ինչ ասել է այդ. մի զօրաւոր հանդիսաւետութիւն որ «ամենքը, ովքեր տեսնում էին այս՝ հաւատում էին»:

Եւ միթէ մենք ևս իսկապէս կը համարձակուենք վկայ լինել... դռւ, դռւ. ես, չափազանց է, չի կարող լինել...

Բայց կարելի է.—Զէ որ մեզ նման շատ ժամանակակիցներ կան, եղբայրներ—այն, որոնք նոյնքան թոյլ, թերահաւատ և սիրոյ աղքատ են, որչափ և մենք,

Բոլորը. Այն, այն...

Բրատոտ. Բայց որոնք հաւասար չեն պարզեատրած. միայն մենք անարժաններս ենք դորա համար կոչուած (իսորին յուզմունք, շարժում): Եւ երբ նայում եմ այս նեղ ծովային տեսարանին, որտեղ բացի ուրուլների ձայնից ուրիշ բան չէ լսում, ինձ թւում է, թէ Աստծու թագաւորութիւնը մի-

հարուստ երկրում, մեծ ճանապարհի վերայ արեգակնա-  
յին տեղում սկիզբն առաւ—մտածում եմ՝ ինչ վկայու-  
թիւն կլինէք, եթէ այդ թագաւորութիւնը նորից երևար այս  
հեռու ընկած, աղքատ, մշտական ձիւնապատ երկրում։

Ֆալկ. Այս, այս

Բրատոտ. Ինձ թւում է, որ այս բոլորը կմիաւորուին և  
հրաշք տեղի կունենայ: (Բոլորը ոտքի են կանգնում)։

Նպիսկոպոս. Օ՞չ, եթէ ծերիս վիճակուած լինէք այս  
տեսնել:

Բլանկ. Այս, եթէ միայն մեծ հաւատին կարող լինէիք  
մասնակից լինել ոչ թէ այն պատճառով, որ մենք դորան ար-  
ժանի ենք, այլ որ կարօտ ենք դորան: (Հնկնում է ծնկնե-  
րի վրայ. Նոյնպէս եւ միաները):

Բրատոտ. Որովհետեւ ամբողջ սերունդը դորան կարօտ է  
և քանի գնում՝ այնքան աւելի: Որովհետեւ այս խոստացուել է,  
պիտի կատարուի՝ եթէ միայն գոյութիւն ունի. (Հոքում է):  
Նորա հաւատի համեմատ՝ այս կլինի: Նորա հաւատը զօրաւոր  
հաւատն է երկրիս վերայ և հաւատն այս կարող է կատարել.  
Նա այս կարող է կատարել:

Բոլորը. Կարող է կատարել:

Բրատոտ. Եթէ չկատարուի—ուրեմն բոլորն էլ անկարե.  
լի է, ուրեմն միւս բաներն էլ ճշմարիտ չեն, բոլորի մէջ էլ մի  
անհասկանալի բան կայ:

Մի բան որ ուժից վեր է—:

### ՀԻՆԴԵՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Ռահիլ. (Միւս սենեկից լսուա է նրա խղճալի ծալ-  
նը). Ելիաս. (գալիս է աշ կողմից ուղղակի դէպի պատու-  
հան եւ վերան յենուամ, բանում է եւ ամբողջ ուժով  
կանչուա). Ելիաս: (Յետոյ յանկարծ յետ է ուզու դառնալ,  
բայց թէ և մնում վայր ընկնի, բայց կրօյէրը բռնում է.  
լաց է լինում, նորից կանգնում եւ դէպի մօր սենեկի  
դուռը ցոյց տալով). Այնտեղ, այնտեղ, մայրս միայնակ չէ.  
նայեցէք միայն, նայեցէք (բոլորը ոտքի են կանգնում): Հ-  
լիասն երեւում է նախագաւթուա: Ռահիլը շտապում է  
դէպի նա) մայրիկը, մայրիկը:

Էլիաս. Վեր է կացնել:

Ռահիլ. Այն, այս:  
 Էլիաս. Եւ շրջում է:  
 Ռահիլ. Այն. բայց միայնակ չէ:  
 Էլիաս. Թող բոլորն իմանան:  
 Ռահիլ. Մի գնար հայրիկի մօտ:  
 Էլիաս. Ո՞չ, գնում եմ զանդակատան գլուխը բոլոր աշ-  
 խարկին իմաց անելու:

Ռահիլ. Բայց սանդուկիք չունես, (պատասխան չը  
 ստանալով՝ զայրութով) այնտեղ սանդուզք չկայ:  
 Կրօյէր. (ծեռքով նշան է անում. կամաց) Սսու:  
 Եալիսկոպոս. (նոյնպէս կամաց) Ա՞խ լսեցէք: (հկե-  
 ղեցուց լսում է երգի ծայն):

Ալէլուիս, Ալէլուիս, Ալէլուիս:  
 Բոլորը. (ընկնում են ծնկների վերայ) Նա այժմ այս  
 գիտէ. Նա այս գիտէ:

(Այդ ժամանակ Կլարան գիշերային սպիտակ վեր-  
 նազգեստ հազին դանդաղ գալիս է. աշքերն ուղղակի դէ-  
 պի եկեղեցին ուղղած: Հրու կանգնում է, ծեռքերը մեկ-  
 նում դէպի այն կողմը, որտեղից երգի ծայնն է զալիս):

Բոլոր հոգևորականները մեղմ ձայնակցում են՝ Ալէլուիս,  
 ալէլուիս, ալէլուիս:

Ռահիլ. (դրսից) Հայրիկը դռան մօտ է կանգնած:  
 Ժողովրդի ձայնը միանալով եկեղեցու զանդակի ձայնի  
 հետ, լսում է մի այնպիսի ցնծալի ուժով, որ թւում է, թէ  
 հազարաւոր մարդկանց ձայն է լսում: Քանի գնում ուժեղա-  
 նում է, որովհետև մարդկանց միւս խմբերն էլ գալիս միանում  
 են. Մի քիչ ժամանակ այնպէս է թւում, կարծես այդ «ալէ-  
 լուիս» ամբողջ տունը վեր է բարձրացնում:

Զանգն երևում է շէմքի վերայ. դէմքը լուսաւորուած  
 մայր մտնող արեգակի ճառագայթներով: Բոլորը ոտքի են  
 կանգնում և յետ յետ գնում: Նա իւր ձեռքերը դէպի Կլարան  
 է մեկնում. վերջինը, որ սենեակի կենդրոնում է կանգնած,  
 նոյնպէս մեկնում է ձեռքերը: Զանգը մօտենում է նո-  
 րան և գրկախառնում: Նոցա շրջապատած երգում են:  
 Սենեակը մարդկանցով լիքն է, նոյն իսկ ելումուտքե-  
 րը: Մի քանիսը յենում են պատուհանին և իրար վե-  
 րայից դէպի դուրս նայում: Կլարան հետզհետէ սահելով յենում  
 է Զանգի ուսերին: Նրգեցողութիւնը դադարում է: Միայն ե-

կեղեցու զանգակի ձայնն է լսում: Կլարան աշխատում է իրան հաւաքել, բայց հազիւ է յաջողում. գլուխը բարձրացնում է և Զանդին նայում:

Կլարա. Դու, իմ սիրելի, իմ ուրախութիւն—երբ դու գլուխ էիր—իմ սիրելի (գլուխը խոնարհում է, ծեռքերն անզօր ներքեւ թողնում. ամբողջ մարմնով թուլանում է):

Զանգ. (Կանգնած է եւ պահում է նրան. իւր ծեռքը դնում է Կլարայի սրտին, զարմացած դէպի նա կունում, յետոյ վերեւ նայում եւ երեխայի ծայնով ասում) Բայց սա չէր մտադրուած աեր das war ja nicht die Absicht. (Սորից կունում, մի ոտքի վրայ չոքում եւ Կլարայի գլուխն իւր ոտքի վրայ է դնում, ուշի ուշով դիտում, զգուշութեամբ պարկեցնում Կլարային եւ նորից կանգնում միաժամանակ նրան նայելով) Բայց այդ չէր աեր das war ja nicht die Absicht: Կամ, —կամ— (ծեռքը սրտին է դնում եւ վայր ընկնում):

Ռահիլը, որ այդ բոլոր ժամանակ քար կտրած նայում էր, բարձր ձայնով կանչում է և ծնկների վերայ ծնողների առաջ ընկնում:

Կրօյէր. Ի՞նչ էր կամենում այս «կամ» ով ասել:

Բրատտ. Սս չեմ հասկանում— բայց այդ ասելով նամուաւ:

Ռահիլ. Մեռած— անկարելի է:

(Զանգերի ծայնը ղեռ շարունակում է):

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ Ր)

Գերմ. բարգմ. Ն. Տիր-Յով. ՀԱՆՆԻՍԵԱՆ.